


ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵԶՈՒՅԵԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԲԵՐԱԾ ՆՊԱՍՏԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ

Լրացավ Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Ռ. Օգոստինոս Զքաքարի Մեզույանը ծնվել է Տրանսիլվանիայի (այժմ՝ Ռումինիա) Զորջովի գյուղաշրադարում, 1921 թվականի սեպտեմբերի 19-ին:



Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Օգոստինոս Զքաքարի Մեզույանը ծնվել է Տրանսիլվանիայի (այժմ՝ Ռումինիա) Զորջովի գյուղաշրադարում, 1921 թվականի սեպտեմբերի 19-ին:

Սկզբնական կրթությունը ստացել է ծճընդապայրում:

1931 թվականին մեկնել է Վիեննա, որ և ստվորել ու ավարտել է գիմնազիան:

1938 թվականին դարձել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ:

1944 թվականին ստացել է վարդապետի կոչում:

1940-ական թվականների սկզբին ընդունվել և 1947 թվականին ավարտել է Վիեննայի ազգային համալսարանի փիլիսոփայության ու աստվածաբանության ֆակուլտետը:

Համալսարանում հետևել է ասորենենի, արամենենի, երրայենենի ու արաբենենի դասընթացներին:

1957 թվականին Օ. Մեզույանը մանկավարժի պաշտոնով մեկնել է Բեյրութ, որ դասավանդել է տեղի Մխիթարյան վարժարանում: 1959–1968 թվականների ընթացքում վարել է այդ վարժարանի տնօրեննի պաշտոնը:

1968 թվականին վերադարձել է Վիեննա և ընտրվել միաբանության վարչության անդամ:

1980-83 և 1990-92 թթ. Օգոստինս Վարդապետ Սեբովյանը ստանձնել է «Հանդիս ամսօրյա»-ի խմբագրի պաշտոնը:

Սկսած 1992 թվականից մինչև այսօր նա վարում է Հոս Անջելեսի Մխիթարյան վարժարանի տնօրինի պաշտոնը:

Օ. Սեբովյանը 1943 թվականից սկսել է զրայվել գրական-գիտաբետագուտական աշխատանքով: Վեց տասնամյակի ընթացքում նա հրատարակել է մեկ տասնյակի համար արժեքավոր մենագրական աշխատություններ, բազմաթիվ հետազոտություններ, հոդվածներ, ուսումնասիրություններ ու գրախոսականներ դրամագիտության, աղբյուրագիտության, ձեռագրագիտության և մատենագիտության վերաբերյալ:

Կենսագրությանը վերաբերող այս հպանցիկ ծանուցումից հետո, ցամկանում ենք անդրադառնալ նրա գիտական, ավելի ստուգ՝ հայագիտական վաստակի վերհանման ու գնահատմանը:

1943 թվականին, տակավիճ քամերկու տարեկան հասակում, երիտասարդ Սեբովյանը Հ. Դուկաս Առաքելյանի ընկերակցությամբ «Հանդիս ամսօրյա» պարբերականում տպագրում են «Մըեի Ավետարանը 932-ին գրված» խորագրով հոդվածը:

Հենվելով տոմարական հաշվարկների և այլնայլ աղբյուրների վրա, նրանք ցույց են տալիս, որ այս ձեռագիրը գրված է ո՛չ թե 902, իմացն կարծում է Հ. Վարդան Հացումին, այլ 932 թվականին:

1947 թվականին դարձյալ «Հանդիս ամսօրյա»-ում լուս է տեսանում Բ. Սեբովյանի «Հա ծագում» էր Մորիկ կայսրը» վերնագրով հոդվածը: Քանի որ հոդվածագիր Սեբովյանի համար գիտական մոտեցումը վեր է ամեն մի զգայական վերաբերմունքից, ուստի նա այդ հոդվածում մերժում է ավանդաբար կրկնվող գրառումները՝ ճշիրված Մորիկ կայսեր ազգությամբ հայ լինելու վարկածին և, վկայակոչելով համապատասխան աղբյուրներ, հավաստում, որ Մորիկ կայսրը եղել է հովուացի:

Նույն թվականին Օ. Սեբովյանը «Հանդիս ամսօրյա»-ում հրատարակում է մի նոր ուսումնասիրություն: Այն կրում է «Նոր Կտակարանի գիրքեր ու կարգը հայոց քով» վերնագիրը: Երկու տարի անց, 1949 թվականին, այդ աշխատությունը լուս է տեսանում նաև առանձին գրքով՝ իբրև «Ազգային մատենադարան» մատենաշարի հերթական՝ ԾԿ գիրքը:

Քննության առնելով Նոր Կտակարանի կանոնի մասին հայկական ձեռագրերում եղած գրառումների հետազոտությունը, աշխատության հեղինակը պարզաբանում ու հստակություն է մտցնում տարընթերցումների հարցում: Այս աշխատությունը նաև փաստական է դարձնում հեղինակ Օ. Սեբովյանի՝ մեռած լեզուների իմացության չափը և նրա աղբյուրագիտական հմտությունը:

Օգոստինու Սեքույանի հայագիտությանը նվիրված վաստակում կարևոր տեղ է զրավում դրամագիտության հետ կապված հարցերի քննարկումը: Այս թեմայի վերաբերյալ առ հրատարակել է «Վիեննայի Միհիթարյան թանգարանի Կոստանդին Գ. և Լուն Ե դրամները» (Վիեննա, 1971 թ.) և «Իրամագիտական պրատումներ» (Վիեննա, 1982 թ.) վերագրով գրքեր և մի շարք հոդվածներ: Այս առումով ուշադրության արժանի խնդիրներ ու հարցադրումներ են արծարծված դրամագետ Զարեն Պոտույանի «Հանդես ամսօրյա»-ում տպագրված հոդվածի աղթով:

Դրամագիտությանը Հ. Օ. Սեքույանի թերած վաստակը ավելի ակներն ու ցցուն է դառնում 1960 թվականին «Հանդես ամսօրյա»-ում տպագրված «Այս քաղաքին մեջ կոխված հայ դրամներ» վերնագրով հոդվածում:

Բերելով համապատասխան փաստարկներ և դրանք հիմնավորելով Ալիշանի հայտնած տեսակետների միջոցով, Հ. Օ. Սեքույանը տրամարանական է դարձնում իր առաջարկած վարկածը և համոզմունք հայտնում, որ Հեթում Ա.-ի ժամանակ հատկապես, վերջին տարիների ընթացքում, ճախադրյալներ են ստեղծվել Սպի ու նաև Տարտուֆի փողերանոցը «ատեն մը» Այսա տեղափոխելու համար, ուր և հատվել են մի շարք պղնձյա դրամներ, որոնց նմուշները հոդվածագիրը հայտնաբերել է Վիեննայի Միհիթարյան միարանության հավաքածուի մեջ:

Անցյալ դարի կեսերին հայկական սկզբանաբյուրուների հանդեպ առաջ եկած բուռն հետաքրքրության թելադրանքով Վիեննայի Միհիթարյան միարանության հայագիտական դպրոցի առաջ ծառանում է համապարփակ և գիտական բնույթի ձեռագրացուցակ կազմելու և հրատարակելու խնդիրը:

1895 թվականին միարանության տպարանում լուս է տեսնում Հակոբոս Տաշյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Միհիթարյանց ի Վիեննա» վերնագրված ձեռագրացուցակը: 1964 թվականի Վիեննայի Միհիթարյան միարանության անդամ հ. Համազասպ Ուկյանը հրապարակ է հանում Վիեննայի մատենադարանի ձեռագրացուցակի նաև Բ գիրը:

Չանցած երկու տասնամյակ՝ 1983 թվականին Հայր Օգոստինու վարդապետ Սեքույանը լուս է ընծայում այդ աշխատության երրորդ և վերջին հատորը, որն ընդունվում է 1256 միավոր ձեռագրերի Ակարագրությունը:

Վիեննայի Միհիթարյան միարանության ձեռագրատանն ամբարված սկզբանաբյուրուներից օգտվել ցանկացող մտավորական առանց Վիեննա գնայու, դիմելով Հ. Օգոստինու վարդապետ Սեքույանի աշխատությանը, կարող է ամբողջական տեղեկություններ ստանալ իրեն զբաղեցնող թեմայի վերաբերյալ: Առանձին դեպքերում կարող է նույնիսկ բավարարվել ձեռագրի թերված Ակարագրությամբ: Այս ամենը, ի պատիվ աշխատության հեղինակի, կատարված է գիտական մակարդակով և հանդիսանում է արժեքավոր Աերդրում հայագիտության մեջ:

Օ. Սեքույանի կազմած հատորում Ակարագրված բնագրերի մեծագույն մասը չեն կարող դասվել ձեռագիր հասկացության դասական օրինակների թվին, քանի որ այստեղ չկան մանրանկարչության գորիաներ, զյուգարդեր ու լուսանցա-

զարդեր, որ այս ձեռագիրն արժեք չեն ներկայացնում գրչության արվեստի առողջական այլն: Իրողություն է, որ այս հատորում գետեղված ձեռագրերի մեծագույն մասը չի կարող ուշադրության արժանանալ հնության առումով: Ի դեպ, նման հարցադրություն ծագել է ան երկրորդ հատորի տպագրության առիթով: Քննադատությունը հարց է բարձրացրել՝ «Դիվանական բնույթ և արժեք» ունեցող ձեռագրերը «զանց ընթերթ»: Այս պահանջը հարցի լուծման լավագույն միջոցը չէ: Ավելին, բանափառությունը շատ արժեքներ շրջանցած կլիներ, եթե այդ մտայնությունը իրականացնելուն դառնար: Մեր խորին համոզմամբ մորօրյա ձեռագրերը չի կարելի և չպետք է զնահատել նախորդների համար սահմանված չափանիշներով:

Գրատպության գոյության պայմաններում ստեղծված ձեռագրերը հետզհետև ձեռք են բերում նոր տեսք, նոր արժեք և իմաստավորում: Գալութիք չէ, որ նորույա ձեռագրերից շատերը, չունենալով գնահատելի արժեք հնության առումով, մեծ հետաքրքրություն և արժեք են ներկայացնում հայագիտության համար: Ուստի ոչ միայն պետք է հաշտվել այդ իրողության հետ, այլև գնահատել, որ սույն ձեռագրացուցակի մեջ աշխատահրողի հետատեսությամբ տեղի է ունեցել նախկինում ընդհանրացված հասկացության ընդարձակում և իմաստավիճ կողմի հարստացում: Արդիականության թերարանքով անառակելի է դառնում ձեռագրացուցակի մեջ ընդգրկման հարցում Օգոստինոս Սեքույանի մոտեցման ճշմարտացիությունը, ուստի մի նոր առումով մեծանում է նրա հրատարակած աշխատության գիտական արժեքն ու հայագիտությանը բերած նպաստը:

1986 թվականին լրանում է Վիեննայում անընդմեջ լույս տեսնող «Հանդես ամսօրյա» պարբերականի հրատարակության 100-ամյակը: Այդ ամսագրի ծալքերում մեկ դարի ընթացքում ամբարված նյութերը հայագիտության տրամադրության տակ դնելու և իր դասակիցների վաստակը հանրությանը ներկայացնելու մղումը իբրև պարտականություն ծառանում է Օգոստինոս վարդապետ Սեքույանի առջև, և նա ձեռնամուխ է լինում հանդեսի մատենագիտությունը կազմելու գործին: Այդ աշխատության իրականացումը վաստակաշատ հետազոտողից խլում է քառամյա երկարատև տքնածան ու հետևողական աշխատանքը:

1990 թվականին Վիեննայի Մշտիթարյանների տպարանում լույս է տեսնում այդ ամսագրի 100-ամյակն ամբողջացնող «Հանդես ամսօրեայի յոդուածներու 100 տարւան մատենագիտական ցուցակ» խորագրով 400 մեծադիր էջից բաղկացած աշխատությունը:

Մատենագիտությունը, ինչպես ցուց է տալիս բարի երկրորդ բաղադրիչը, գիտական դիսցիլին է: Այդ աշխատանքով գրադպող կամ դրա մասին խոսք ասողը կամա թե ակամա պետք է ցուցաբերի գիտական մոտեցում: Ի պատիվ այս «Մատենագիտության» իրականացնողի՝ պետք է ասենք, որ Օգոստինոս վարդապետ Սեքույան այդ աշխատության մեջ հանդես է բերել անորանալի գիտական մոտեցում:

«Բանի մը խոսք» վերնագրով նախարանում հեղինակը հույս է հայտնում, որ իր կատարած աշխատանքը «կոյուրացնե ուսումնասիրողի գործը»: Հարկ ենք համա-

րում հավաստիացնել, որ աշխատությունն իրականացնող Բասել է իր նպատակին: Մատենագիտությունը իրականացված է մեծ հմտությամբ և գործիմացությամբ, մտավորականի սեղանին է դրված նախանձախմնորորեն կատարված աշխատանք և դիմուին հնարավորություն է տալիս օգտվել հանդեսում ամբարված գիտության հսկայական պաշարից:

Օգոստինու Սեքույանի աշխատանքային գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում նաև թարգմանչական աշխատանքը: 1987 թվականին նա լուս է ընծայում «Աշխարհաբար սաղմոսարան»-ը: «Երկու խոսք» վերնագրված առաջարանում նա հարկ է համարում ընթերցողին հայտնելու հետևյալը. «Թարգմանությունն կատարված է կես ազատ... Ակատի առնված են վերջին տարիներուն հրատարակված քննական թարգմանությունները՝ գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, հունարեն և լատիներեն, բայց իբրև հիմնական բնագիր, պահված է հայ Աստվածաշունչի Մեսրոպյան թարգմանությունը և այդ պատճառով ալ, այս թարգմանությունը որոշ ընթերցվածներու պարզապես կխոտորի եկրոպական բնագիրներեն»:

Սեքույան վարդապետը վերջին տարիների ընթացքում իրականացրել է նաև Աստվածաշունչ մատյանի աշխարհաբար թարգմանությունը, որը սակայն տակավին հրատարակված չլինելու պատճառով մենք դրան թեև անդրադառնալ չենք կարող, սակայն կուգենայինք տպագրված տեսնել նրա երկար տարիների տքնանքի ու համար աշխատանքի արգասիք:

Միաբանության վաստակաշատ հիմնադիր Միխիթար Սեբաստացին իր հիմնադրած միաբանության անդամներին՝ հոգևոր հայրերին, իբրև պատգամ ավանդ է թողել իրականացնել «Ռատուն ամենայն կարևոր գիտությանց» և օգնության հասնել «ազգի հոգևոր կարոտությանը»:

Օգոստինու Սեքույանի գործունեության հիմքում արմատավորված է Միխիթար Սեբաստացու պատգամի գործնական իրականացումը: Հավատարիմ իր հոգևոր կոչմանը՝ շուրջ վեց տասնամյակի ընթացքում նա ծառայել է հայագիտությանը ու միաբանության բարգավաճմանը և երիտասարդ սերնդի դաստիարակությանը՝ ձգուելով իր պարտը կատարել Մեծն Միխիթարի. կողմից ավանդ թողնված պատգամի իրականացման գործում:

Մեր խոսքն ավարտելուց առաջ սրտանց շնորհավորում ենք Հայր Օգոստինու մին՝ նրա ծննդյան 80-ամյակի առաջապես ասպարեզում արգասավոր գործունեության 60-ամյակի առիթով: